ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով նախագահների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, գոհունակություն հայտնեց երկու դարավոր բարեկամ երկրների ու ժողովուրդների միջեւ ամենաբարձր մակարդակի վրա ձեւավորված հարաբերությունների համար, որոնք առավել զարգանում, ջերմանում եւ համագործակցության նոր ընդգրկում են ձեռք բերում: Անդրադառնալով երկու ժողովուրդների պատմական կապերին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց հայ ժողովրդի հանդեպ Ֆրանսիայի ժողովրդի եղբայրական սերն ու ջերմությունը, ինչի ականատեսն է եղել Ֆրանսիա կատարած հովվապետական այցերի ընթացքում: «Ձեր այցը Հայաստան մեր երկիր ուրախությամբ է համակել ինչպես մեր, նույնպես եւ մեր ողջ ժողովրդի հոգին: Մեր ժողովուրդը քաջագիտակ է եւ հաղորդ, որ իր կյանքի դժվարին ժամանակներում Ֆրանսիայի ժողովուրդն իր մարդասեր ու արդարասեր էությամբ մշտապես աջակից է եղել իրեն», - նշեց Նորին Սրբությունը՝ երախտագիտություն հայտնելով հայ ժողովրդին եւ Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար:

Հայոց Հայրապետն օրհնությամբ եւ գնահատանքով ընդգծեց նաեւ Ֆրանսիայի իշխանությունների հոգատար վերաբերմունքը ֆրանսաբնակ հայորդիների նկատմամբ, որ, վերապրելով Հայոց ցեղասպանությունը, քրիստոնեական լավատեսությամբ եւ հույսով կառողացան իրենց հոգեւոր-ազգային կյանքը կազմակերպել Ֆրանսիայի մեջ եւ այսօր, որպես արժանավոր քաղաքացիներ, իրենց կարեւոր ծառայությունն են բերում Ֆրանսիայի առաջընթացին եւ բարօրությանը:

«Մեր ժողովուրդն առանձնահատուկ երախտագիտության զգացում ունի հանդեպ Ֆրանսիան եւ իր ժողովուրդը նաեւ այն զորակցության համար, որ ցուցաբերվում է Ցեղասպանության ահավոր ոճրի ճանաչման եւ դատապարտման գործին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ մեր Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրավունքի պաշտպանությանը», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շնորհակալություն հայտնելով Ֆրանսիայի նախագահի կողմից այդ ուղղությամբ գործադրվող ջանքերի համար:

«Մեծ պատիվ է Հայաստանում գտնվել՝ վկայելու մեր երկու երկրների բարեկամությունը», - իր հերթին ասաց Ֆրանսիայի նախագահը՝ ուրախություն հայտնելով հանդիպման առիթով: Ընդգծելով Հայ Եկեղեցու եւ նրա հովվապետների դերը հայ ազգի ինքնության ու միասնության պահպանման գործում՝ պարոն Նիկոլա Սարկոզին իր հարգանքը հայտնեց Հայ Եկեղեցուն եւ Ամենայն Հայոց Հայրապետին եւ հաջողություններ մաղթեց կարեւոր այդ առաքելության իրագործման մեջ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բարեմաղթանքները բերեց Ֆրանսիայի նախագահին եւ հայցեց, որ Բարձրյալ Տերն Իր օրհնության ներքո խաղաղության եւ բարօրության մեջ պահի ու պահպանի երկու ժողովուրդներին եւ երկրները:

Վեհափառ Հայրապետն ընդունեց Ս. Սարգսյանին եւ Ն. Սարկոզիին

ՀՀ եւ Ֆրանսիայի նախագահները Մայր Տաճարում

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի փնօրեն Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը, դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, Սուրբ Էջմիածնի միաբաններ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետի առաջնորդությամբ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այցելեցին Մայր Տաճար, եղան Տաճարի թանգարանում, ուր նրանց ներկայացվեցին Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի նվիրական սրբությունները:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Հոկտեմբերի 31-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների նորանշանակ դեսպան Ջոն Ա. Հեֆերնին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով դեսպանին եւ իր բարեմաղթանքները բերելով նրա առաքելությանը, անդրադարձավ երկու երկրների միջեւ առկա ջերմ եւ սերտ հարաբերություններին: Նորին Սրբությունն ի դեմս դեսպանի շնորհակալություն հայտնեց ԱՄՆ-ի իշխանություններին՝ տարածաշրջանում առկա խնդիրների լուծմանն ուղղված ջանքերի եւ մասնավորաբար հայ ժողովրդի հանդեպ մշտապես ցուցաբերվող աջակցության եւ զորակցության համար:

Հանդիպմանը անդրադարձ կատարվեց Մինսկի խմբի համանախագահների եւ խմբի համանախագահող երկրների նախագահների կարեւոր դերակատարությանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների գործադրած ջանքերին՝ ի խնդիր տարածաշրջանում խաղաղության եւ համերաշխության մթնոլորտի ձեւավորման:

Զրույցի ընթացքում դեսպանին ներկայացվեցին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գործունեությունը կյանքի տարբեր ոլորտներում եւ Եկեղեցու առջեւ ծառացած զանազան մարտահրավերներ:

Իր հերթին նորանշանակ դեսպանն ուրախություն հայտնեց Մայր Աթոռում լինելու կապակցությամբ եւ շնորհավորեց Վեհափառ Հայրապետին ծննդյան 60-ամյակի եւ գահակալության 12-րդ տարեդարձի առիթով:

Հանդիպմանը ներկա էին ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը եւ ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ